

ԱՐՄԵՆ ԴԵՏՐՈՍՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
alpehist@gmail.com

0000-0002-1982-5593 

DOI: 10.54503/1829-4073-2025.2.92-108

ԱՆԳԵՂ ԱՍՏՎԱԾԸ ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամփոփում

Հայ գրականության առաջին իսկ աղբյուրներից ավանդված է Անգեղ աստծու անունը, նրա հետ կապված Տորք կամ Տուրք Անգեղայի առասպելը, որոնք արժանացել են տարբեր մեկնաբանությունների: Եղած աղբյուրների հիման վրա և տարածաշրջանային ու հնդեվրոպական կապերի բացահայտմամբ վերականգնվում են այդ աստծու կերպարը, գործառույթները: Մանրամասն քննությամբ հիմնավորվում է, որ Անգեղ անունը ստուգաբանվում է որպես «Անտեսանելի», որն այդպիսով զուգահեռն է հունարեն անդրաշխարհի Հադես աստծու անվանը: Հադեսը, որ կոչվում էր «Ստորերկրայքի Զևս», գլխավոր աստված Զևսի մի հիպոստասին էր, նրա մի ենթակերպարը (ընդհանրապես, մեծ աստվածները կարող են լինել երկնքի, երկրի և անդրաշխարհի տիրակալներ): Անտեսանելի են համարվել Ուրարտուի մեծ աստված Խալդին, իրանական Ահուրամազդան և հին վրացական կրոնի արարիչ աստվածը: Անգեղի կերպարը որոշակի կապեր է դրսևորում նաև Ս.GUR գաղափարագրով ներկայացված Հայաստյի մեծ աստծու հետ, որով և Անգեղը վերականգնվում է որպես հնագույն հայկական դիցարանի մի մեծ աստծու անուն կամ մականուն:

Բանալի բառեր՝ *համեմատական առասպելաբանություն, հնդեվրոպական լեզվաբանություն, հայկական առասպելաբանություն, հայոց հնագույն դիցարան, Միհր, Հադես, Օդին:*

* Հոդվածը ներկայացվել է 28.03.25, գրախոսվել է 27.07.25, ընդունվել է տպագրության 29.08.2025:

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

Ներածություն

Այս հոդվածում փորձ է արվում հայոց հին գրականության, համեմատական առասպելաբանության և որոշ այլ տվյալների հիման վրա բացահայտել հնագույն հայոց դիցարանի մի մեծ աստծու անունը, կերպարը և նրա հետ կապված որոշ իրողություններ:

Հայ նախաքրիստոնեական աստվածների անունները, ինչպես և կրոնական բազում տերմիններ, հիմնականում իրանական են:¹ Ընդ որում, այդ դիցանունները և տերմինները մեծ մասամբ ծագում են պարթևական նախատիպերից, որը վկայում է այն մասին, որ նախաքրիստոնեական հայ կրոնի իրանական տարրը, ինչպես և, ի միջի այլոց, հայ մշակույթի հիմնական իրանական շերտը, գալիս է հետաքեմենյան՝ պարթևական շրջանից: Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում, ինչպես և այլուր, տեղական աստվածները համադրվել են հունականներին և սկսել են կոչվել նաև հունական անուններով: Հայոց նախաքրիստոնեական դիցարանի աստվածները հայտնի են հիմնականում իրանական և հունական անուններով՝ Արամազդ-Ջևս, Անահիտ-Արտեմիս, Վահագն-Հերակլես, Միհր-Հեփեստոս, Տիր-Ապոլոն: Երկու աստվածների ծագումը միջագետք-սիրիական է (Նանե-Աթենա, Բարշամին) և միայն Աստղիկ դիցուհու անունն է հայկական: Բայց հնագույն ժամանակներում, հայերը, ինչպես և աշխարհի բոլոր ժողովուրդները, պետք է ունենային իրենց սեփական՝ բնիկ հայկական անուններով աստվածներ:

Կրոնական ազդեցությունների և փոփոխությունների ժամանակ նոր անուններով աստվածների կերպարները հաճախ շարունակում են հին տեղական պաշտամունքը: Նույնիսկ քրիստոնեության ընդունումը, Վ.Ի. Աբակի պնդմամբ, շատ առումներով եղել է միայն «տերմինաբանական և անվանաբանական հեղաշրջում»:² Քրիստոնեական անունների տակ ամենուրեք, այդ թվում և Հայաստանում, իրենց գոյությունն էին շարունակում հին աստվածները: Նույն տրամաբանությամբ, կարող ենք ասել, որ իրանական և հունական ազդեցությունների բերած փոփոխությունները նույնպես պետք է լինեին հիմնականում անվանաբանական և տերմինաբանական: Փոխվել են դիցանուններն ու պաշտամունքային տերմինները, որոնցից շատերը դարձել են իրանական, բայց կերպարներն ու պաշտամունքը մնացել են հինը, կամ գոնե պահպանել շատ հին հատկանիշներ: Եվ Անգեղ աստծու կերպարն ու հատկանիշները պահպանվել են Միհրի կերպարում:

¹ Տե՛ս ՀԱԲ, ՀԱՆԲ և **Martirosyan** 2021 համապատասխան բառահոդվածներում:

² **Абаев** 1972, 322.

Անգեղը և Տուրք Անգեղյան

Սեբեոսի պատմության առաջին գլխում հայոց արևմուտքի և Ծովք-Անգեղ տան իշխանների ծննդաբանությունը հանգեցվում է Փառնավազին՝ Հայկ նահապետի ավագ որդի Արամանյակի սերնդից. «Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիւրատ, եւ Բիւրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»:³

Մովսես Խորենացու մոտ (Բ.ը) Անգեղ տան էպոնիմը Տուրք Անգեղեան է (որոշ ձեռագրերում՝ Տորք Անգեղեայ),⁴ Հայկի տոհմից, Մեծ Հայքի արևմուտքի առաջին կուսակալը: Պատմել են, որ նա ձեռքով որձաքար ապառաժներ է ճեղքել, եղունգներով տաշել և դրանց վրա արծիվներ քանդակել: Իր հայտնի

³ Ձեռագրերում՝ Բագարամ և Բիւրամ, որոնք արդեն Ք. Պատկանյանի կողմից ճշտվել են Բագարատի և Բյուրատի, տե՛ս՝ Սեբեոսի հրատարակություններում, Արեղյան 1965, 57 և այլուր:

⁴ Մեզանում շատ հայտնի Տորք տարբերակը (տարածված հատկապես Ղ. Աղայանի պոեմից), դատելով ձեռագրերից, սխալ ձև է՝ ճիշտն է Տուրք, մի անուն, որն ավանդված է հայոց մեջ (ակնհայտ է, որ Տորքը Տուրքի սխալ գրչության՝ -ի բացթողնման հետևանք է, մինչդեռ -ի հավելումն անբացատրելի է, տե՛ս **Արեղյան** 1985, 154–158): Գիտական գրականության մեջ շատ հաճախ, Ն. Ադոնցի հետևությամբ, Տորք անունը համարվել է փոխառյալ խեթալուվիական ամպրոպի աստծու անունից, համապատասխան կերպարային մեկնաբանությամբ (**Adontz** 1927; **Ադոնց** 2006, 79–96): Այդ անունները՝ հիերոգլիֆային լուվիերեն Tarhunt (< Tarhuwant-), Tarhunza (< Tarhunts-), խեթ. Tarhun(a), երբեմն՝ կրճատ՝ Tarku-, ծագում են հնդեվրոպական *terh₂- «հաղթել, անցնել» արմատից: Այս անունը բազում ձևերով ի հայտ է գալիս հինփոքրասիական, բալկանյան և իտալյան անվանաբանության մեջ (հմմտ. հունական գրչությամբ ավանդված էտրուսկների փոքրասիացի նախնու Τάρχων-, Τάρκων- անունը, Strabo 5.2.2, հմմտ. և լիկ. Trqqa-, Trqqnt-, լատ. Tarquinius, են): Կարծում են, որ այս անունը ձևավորվել է խաթական՝ «նախախեթական» ամպրոպի աստված Taru-ի անվան ազդեցությամբ (**Schwemer** 2008, 19), սակայն հնարավոր է, որ ընդհակառակը, խաթական անունն է առաջացել խեթալուվիականից (եթե սեպագիր Tarhu-ն որոշ բարբառներում ունեցել է տարիտ- արտասանությունը, այն խաթերենում կարող էր հանդես գալ h-ի անկմամբ, հենց Taru ձևով, հմմտ. **Николаев, Страхов** 1987, 149–153): Հայ. Տորքը այնքան էլ նման չէ սեպագիր Tarhun-ին, որը հայերենում կանոնավոր կերպով պիտի փոխառվեր որպես *Տարխոն-, իսկ Tarku-ն՝ *Տարկ/գ/քո-: Այսպիսով, կարծում ենք, որ Տորք Անգեղայի՝ Ն. Ադոնցի առաջարկած անատոլիական մեկնաբանությունը, որը կրկնվել է բազմաթիվ աշխատություններում, պետք է վերանայել, թեև հնարավոր է, որ անունների նմանությամբ պայմանավորված որոշ կապեր առաջանային, տե՛ս **Պետրոսյան** 2006ա. 2011, 398–399 և ստորև:

Անգեղ աստվածը հայոց հնագույն դիցաբանության մեջ

առասպելում նա հսկայական քարեր է նետում Պոնտոսից հարձակվող ավազակների նավերի վրա:

Բագարատ (իրան. Bagadāta) նշանակում է «baga-ի՝ «աստծու» տվածը/տուրք»: Անգեղ-Բագարատ «աստծու տուրք (որդի)» և Տուրք Անգեղեայ «Անգեղ (աստծու) տուրք» անունները համադրելի են, որը ցույց է տալիս նրանց համապատասխանությունը⁵: Պետք է նկատել, որ այս համադրությունը միարժեք չէ: Բագարատ անունը, որպես «աստծու տուրք/որդի» առավել կհամապատասխաներ Անգեղ աստծու որդուն, բայց, ըստ աղբյուրի, Բագարատն ինքն է կոչվել Անգեղ: Դա կարող է մի քանի բացատրություն ունենալ. 1. Տուրքն ինքն էլ կարող էր աստված համարվել, 2. իրանական ազդեցության, ապա և քրիստոնեության դարաշրջաններում հնագույն դիցաբանությունը նշանակալիորեն մոռացված և ձևափոխված կարող էր լինել, 3. հայրանունը կարող էր դառնալ մականուն, ինչպես մեզանում ընդունված է ասել Տորք Անգեղ, Անգեղյայի փոխարեն):

Անգեղ և Անգղ կոչվող տեղանունները հայտնի են Հայաստանի տարբեր շրջաններից՝ Ծոփք, Վասպուրական, Այրարատ, Սյունիք, Գուգարք,⁶ որը կարելի է դիտել որպես Անգեղի պաշտամունքի համահայկական բնույթի արտահայտություն: Մ. Խորենացին Տուրքին ներկայացնում է որպես սաստիկ տգեղ («խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց») և, ըստ այդմ, Անգեղ անունը մեկնաբանում է որպես «տգեղ», որի պատճառով էլ նա կոչվել է Անգեղեայ, իսկ տոհմը՝ Անգեղ-տուն: Անգեղը բնիկ հայերեն կազմություն է՝ կազմված հնդեվրոպական *դ- ժխտականով *wel- «տեսնել» արմատից, «անտես, անտեսանելի» «անտեսք» և նման իմաստներով, հմմտ. գեղեցիկ, որպես «տեսքոտ»:⁷ Ի միջի այլոց, այսպիսով, հայ առասպելաբանության մեջ Տուրք Անգեղյան մականունով հակադրվում է մեկ այլ Հայկյան հերոսի՝ Արա Գեղեցիկին, ինչը ևս մեկ փաստարկ է Անգեղի այս ստուգաբանության օգտին:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Անգեղը հանդես է գալիս բնագրի Ներգալ աստծու փոխարեն (Դ Թագ. Ժէ.30): Ներգալը հնագույն միջագետքյան աստված էր, կապված մահվան և պատերազմի հետ, անդրաշխարհի տիրակալը, որի պաշտամունքը հետագայում տարածվել է նաև այ-

⁵ Աբեղյան 1965, 58–59; 1986, 157:

⁶ Հակոբյան և այլք 1986, 252–256:

⁷ *Wel- արմատի՝ հնդեվրոպական լեզուներում և հայերենում ունեցած դիցաբանական արտացոլումների վերբերյալ տե՛ս՝ Petrosyan 2016, հարցի գրականությամբ:

լուր:⁸ Իսկ Անգեղ աստծու վերաբերյալ ուղղակի տեղեկություններ չկան՝ այդ անունը հանդես է գալիս միայն տեղանուններում և Տուրքի մականվան մեջ: Ծովք նահանգի հարավ-արևելյան գավառը, ներկայիս Դիարբեքիրից հյուսիս-արևմուտք, կոչվում էր Անգեղ տուն, որի կենտրոնն էր Անգ(ե)ղ բերդաքաղաքը (հուն. Ίγγηλην, լատ. Ingilena), որտեղ էլ գտնվում էր հնագույն հայ արքաների գերեզմանոցը (Փավստոս Դ.իդ): Իսկ Ներգալը հնում մեծ աստվածն էր Ուրկեշի (Դիարբեքիրից հարավ-արևելք): Պաշտամունքի վայրերի մերձակա տեղայնացումը և արքաների գերեզմանոցը փաստում են Անգեղի կապը Ներգալի հետ և անդրաշխարհի աստված լինելու հանգամանքը:

Ընդհանրապես, կյանքի և մահվան աշխարհների հարաբերությունը բնորոշվում է նրանց բնակիչների փոխադարձ անտեսանելիությամբ:⁹ Աշխարհի ժողովուրդների առասպելներում անտեսանելիությունը համադրվում է կուրության, կամ աչքի այլ թերությունների հետ, և անդրաշխարհի աստվածությունները կարող են պատկերացվել որպես կույր, միակնյա կամ շիլ: Ընդհանրապես, ֆիզիկական թերությունները («տգեղությունը»)՝ ճաղատությունը, կաղությունը, շլությունը, ապա և տեսքի ու տեսողության թերությունների առավել ուժեղ արտահայտված ձևերը՝ մեկ աչք ունենալը, կուրությունն ու անտեսանելիությունը անդրաշխարհի աստվածությունների բնորոշ հատկանիշներ են: Այսպես, առասպելի մի դրվագում Ներգալն անտեսանելի է անդրաշխարհի դիցուհու վեզիրի աչքին: Ավելին, նա շիլ է, կաղ և ճաղատ,¹⁰ այսինքն ֆիզիկական թերություններով, ինչը միանգամայն համապատասխանում է հայոց Անգեղին և Տուրք Անգեղայի «անտեսք, տգեղ» մեկնաբանությանը: Հատկանշական է, որ Տուրք Անգեղայի՝ թշնամիների նավերի հետևից ժայռեր նետող կերպարը (Խորենացի Բ.ը) համեմատվում է հին հունական առասպելի միաչքանի քարանձավաբնակ կիկլոպ Պոլիփեմոսի հետ,¹¹ ինչը կարող է համարվել ևս մի փաստարկ Անգեղի այս մեկնաբանության օգտին:

Հայերենը հնդեվրոպական լեզուների մեջ առավել մոտ է համարվում հունարենին:¹² Հունական մահվան աստված Հադեսի անունը ստուգաբանվում է որպես *h₂-wid- «ան-տես», «անտեսանելի»:¹³ Անգեղը, ըստ այդմ, պետք է մեկ-

⁸ Wiggermann 1998–2001.

⁹ Пропп 1946, 58–61.

¹⁰ Афанасьева, Дьяконов 1981, 88–89.

¹¹ Ադնց 2006, 81:

¹² Martirosyan 2013, գրականությամբ:

¹³ Beekes 1998, 17–19; 2010: 34; Ivanov 1999, 284, հարցի գրականությամբ:

Անգեղ աստվածը հայոց հնագույն դիցաբանության մեջ

նաբանվի որպես Հադեսի անվանը զուգահեռ մի կազմություն:¹⁴ Անգեղ դիցանվան և անգղ բառի կապը, այսպիսով, կարող է լինել միայն երկրորդային՝ «Ժողովրդական ստուգաբանություն» (ընդ որում, գիշակեր անգղը միանգամայն հարմար է մահվան աստծու խորհրդանիշ լինելու համար):¹⁵

Բազարատ անվան առաջին մասը՝ իրանական *baga*-ն կիրառվել է մի քանի աստվածների՝ այդ թվում և գերագույն Ահուրա Մազդայի համար, բայց սովորաբար, և հատկապես հայոց մեջ, վերաբերվել է կոնկրետ մեկ աստծու՝ Միհրին: Ըստ Հ. Աճառյանի, Բազարատ նշանակում է «Միհր աստծու տվածը»,¹⁶ այսինքն՝ «Միհրի տուրք» և այն կարելի է համարել Միհրդատ (հնում՝ Միթրիդատա) անվան մի տարբերակ: Բազ(ա)-ի՝ մանավանդ հայոց մեջ Միհրին վերաբերելու մասին է խոսում Հայաստանում Միհրի պաշտամունքի կենտրոնի Բազայառիճ կամ Բազառիճ անվանումը: Ապա՝ հեթանոսական տաճարը կոչվել է բազին կամ մեհեան, իսկ վերջինս ծագում է Միհրի անունից:¹⁷ Ընդհանրապես, էպիկական մեծ հերոսները հաճախ լինում են աստծու որդիներ, («աստվածատուր») ինչպես հունական Հերակլեսը, Թեսևսը, Պերսևսը, Աքիլլեսը և մյուսները: Հնդեվրոպական **dō-ro-* «տուր(ք)» տարրով անունները բազում են հնդեվրոպական, հատկապես հայկանանին առավել մոտ՝ հունական և իրանական անվանաբանության մեջ՝ ինչպես հուն. Թեոդորոս, Ապոլոդորոս, հայ. Աստվածատուր, Խաչատուր, և նույն արմատի այլ ածանցներով՝ հուն. Թեոդոտոս, Հերոդոտոս, իրան. Բազադատա, Տիրիդատա (որից և հայ. Տրդատ), հմմտ. և սլավ. Բոգդան ևն:

Անգեղը, Միհրը, Խալդին և Ա.ԳՐ-ը

Անգեղը, դատելով նրա բնիկ հայկական անունից, պետք է լիներ հայոց հնագույն, իրանական ազդեցությունից առաջ եղած դիցաբանի աստվածներից, որը, նման հատկանիշների պատճառով, նույնացվել է Միհրի հետ: «Կրտսեր Ավեստան» Միթրա/Միհրին մեռյալների հոգիների անդրժիրիմյան դատավորի գործառույթն է վերագրում, որին հետևում են պահլավական տեքստերը: Հենց Միհրն է, որ Չինվատ կամրջի վրա սպասում է հանգուցյալի

¹⁴ Անգեղի այս մեկնաբանությունը տե՛ս **Петросян** 1987, 59–60; **Պետրոսյան** 2006ա, 34–42:

¹⁵ Հմմտ. **Adontz** 1927, 187 seq.; **Джаукян** 1988, 72–73:

¹⁶ ՀԱՆԲ, Ա, 355: Իրանական *baga*-ի, նրա՝ Միթրա/Միհրի փոխարեն և այլ կիրառությունների վերաբերյալ տե՛ս **Bayley et al.** 1989; **МНМ** 1, 155–156:

¹⁷ ՀԱԲ, Գ, 296:

հոգուն («Մենոգ ի խրատ» 2.119):¹⁸ Եվ դա արդեն բավարար էր, որ իրանական ազդեցության դարաշրջանում նա նույնացվեր հայոց մահվան և անդրաշխարհի հնագույն աստծու հետ: Բայց հին կերպարի առանձնահատկությունների հետքերը մնացել են: Այսպես, ի հակադրություն իր իրանական անվանակցի, որը, գոնե հելլենիզմի դարաշրջանում, հիմնականում արևի աստված էր և նույնացվել է հունական Հելիոսի և Ապոլոնի հետ, հայոց Միհրը նույնացվել է Հեփեստոսի հետ (Խորենացի Բ, Ժդ): Ըստ այդմ, նա արևի աստված չէր, ինչպես շատ հաճախ համարվել է մեզանում, կամ՝ նրա արևային հատկանիշները, որոնք կարող էին ձևավորվել իրանական ազդեցությամբ, եղել են թույլ արտահայտված (հայոց մեջ Ապոլոնի և Հերմեսի հետ նույնացված արևի աստվածն էր Տիրը): Հեփեստոսը ստորերկրյա կրակի, հրաբխի (և դարբնության) աստված էր: Եվ հայոց Միհրը, դատելով հին պաշտամունքի վայրից պահպանված մնացորդներից, հենց ստորերկրայքի և ստորերկրյա կրակի աստված է եղել:¹⁹

Քրիստոնեության ընդունումից հետո Միհրը, ինչպես երբեմն լինում է, անցել է աստվածայինից ավելի ցածր՝ էպիկական հերոսների մակարդակ: Միհրի տարբերակային մի ձևն է Միեր անունը, որը կրում են Սասունի էպոսի երկու հերոսներ (այսինքն՝ Միհրը էպոսում երկփեղկվել է երկու՝ Մեծ և Փոքր Միերների կերպարների): Վանա ժայռի ուրարտական հսկայական արձանագրությունը հայերը կոչում են «Միերի դուռ»: Արձանագրության հենց առաջին տողերում ասվում է, որ Իշպուինի և Մինուա արքաներն այդ «դարպասը» (այսինքն՝ դարպասի տեսքով ժայռափոր արձանագրությունը) նվիրում են «Խալդիին՝ տիրոջը»:²⁰ Հայերեն «Միերի դուռ» անվանումը բացատրվում է այն հանգամանքով, որ «Սասնա ծռերում» այդտեղից է ժայռի մեջ մտնում և ապագայում այդտեղից պետք է ելնի Փոքր Միերը: Սա թույլ է տվել Ի. Դյակոնովին համադրել հայկական էպոսի Միերին և ուրարտական դիցարանի Խալդիին, և ցույց տալ, որ, այսպիսով, վիպական Միերի հնագույն համապատասխանությունը Խալդին է, որը միայն հետագայում, իրանական ազդեցության

¹⁸ Տե՛ս, օրինակ, **Рак** 1998, 297, 490: «Մենոգ ի խրատի» տեքստի անգլերեն թարգմանությունը՝ <http://www.avesta.org/mp/mx.html#chapter2>: Անդրաշխարհի հայ ավանդական պատկերացումները, հին իրանականի համադրությամբ, տե՛ս **Հարությունյան** 2000, 439–440:

¹⁹ Այն ինչ պահպանվել է հին Բագադիճի տեղում (ժայռի լանջին ներքև տանող աստիճաններ ևն), հիշեցնում է հռոմեական Միհրի՝ Միթրասի ստորերկրյա անձավային պաշտամունքը, տե՛ս **Russell** 1994; **Петросян** 2004, 49:

²⁰ КУКН 38.

տակ է վերանվանվել միջին իրանական Միհր անվամբ, ապա և վիպականացել որպես Միեր:²¹

Ընդհանրապես, նմանատիպ ժայռափոր «դարպասները» Խալդիի պաշտամունքի առանձնահատուկ դրսևորումներն են:²² Այսպիսով, Խալդին «ապրել» է քարե «դռան» հետևում, լեռնային քարայրի մեջ, որտեղից նա դուրս է եկել հատուկ դեպքերում, որոշ տոների ժամանակ: Իսկ ուրարտական արվեստում Խալդիի խորհրդանիշը կրող դատարկ մարտակառքի պատկերը ցույց է տալիս, որ նա «տեղաշարժվել» է այդ կառքով: Ըստ այդմ, կարծում են, որ նա պատկերացվել է որպես մի աներևույթ, մարդկային հասանելությունից դուրս էություն, բառիս բուն իմաստով «անտեսանելի աստված»:²³

1995-ին Վանից ոչ հեռու հայտնաբերված վահանի վրա Խալդին պատկերված է ուրարտական աստվածների զորքի առջևում վազքով կռվի նետովելիս, ձեռքերին՝ նիզակ և աղեղ, ամբողջովին բոցերի մեջ:²⁴ Ըստ այդմ, Խալդին կարող է պատկերացվել նաև որպես կրակի աստված²⁵ (թերևս նաև որոշ արևային հատկանիշներով): Աստծու այս կերպարը միանգամայն համապատասխանում է նրան, ինչ վերականգնվում է Միհր-Հեփեստոսի և Փոքր Միերի կերպարներով վերականգնվող հայկական Միհրի համար (ժայռի մեջ, քարանձավում «բնակվող» ստորերկրյա կրակի և պատերազմի աստված): Այսպիսով, Անգեղը, կարելի է ասել, հնագույն հայկական համապատասխանությունն է ուրարտական Խալդիի:

Տուրք անունը հիշեցնում է ուրարտական Turani դիցանունը (-ni-ն ուրարտական ածանց է): Այն, ուղղակի նմանության պատճառով, Գ. Զահուկյանի կողմից համադրվել է հայ. Տուրք բառի հետ:²⁶ Համաձայն Ի. Դյակոնովի սրամիտ վարկածի, Տուրա(նի)ն, որն իր կարգի աստվածների մեջ ստանում է երկու անգամ քիչ զոհեր, այսինքն՝ «սննդի կես բաժինը», կարող է դիտվել որպես «երեխա-աստված»՝ թերևս ամպրոպի աստված Թեյշեբայի որդին:²⁷ Ան-

²¹ **Дьяконов** 1983: Այս վարկածը մանրամասն քննարկվել և հիմնավորվել է մեր աշխատանքներում, տե՛ս հատկապես **Петросян** 2004:

²² **Հմայակյան** 1990, 67–69:

²³ Այս տեսակետն առաջարկել է Պ. Կալմայերը մի շարք աշխատություններում, տե՛ս **Calmeyer** 1974; 1991, 313, 315; տե՛ս և **Salvini** 1989, 86.

²⁴ **Belli** 1999, 37–41, fig. 17.

²⁵ **Պետրոսյան** 2006բ, 40; 2006գ, 22–23, 26; տե՛ս և **Բադալյան** 2014:

²⁶ **Զահուկյան** 1986, 53:

²⁷ **Diakonoff** 1981: 82; **Дьяконов** 1990: 98, 105: Ենթադրվում է, որ Տուրանին կարող էր լինել խուռիական ամպրոպի աստված Թեշուբի որդի Տիլլայի համարժեքը և խուռիական Թեշուբ-Խեբատ-Տիլլա ընտանեկան բջջին պիտի համապատասխաներ ուրար-

Պետրոսյան Ա.

կախ ամենից, Տուրք-Տուրանի նույնությունը շատ հավանական է, և եթե վերջինիս համարենք ոչ թե Թեյշեբայի որդի (ինչը միայն մտահայեցողական է), այլ Խալդիի, նա միանգամայն կհամապատասխանի Տուրք Անգեղային:

Ըստ անտիկ հեղինակների տվյալների (<Երոդոտոս I.189, VII.40. Քսենոփոն, *Cyropaedia* VIII.3.12., Կուրցիոս Ռուփոս, *Hist. Alex.* III.3.11), սկսած Կյուրոսից մինչև Դարեհ III, պարսկական բանակին ուղեկցել է սպիտակ ձիեր լծած մի դատարկ կառք, նվիրված Ջևս /Յուպիտերին, այսինքն՝ Ահուրա Մազդային, որն անտեսանելիորեն գտնվել է նրանում:²⁸ Կարծում են, որ այս «անտեսանելի աստծու» պատկերացումը պարսիկները կարող էին փոխառել Ուրարտուից:²⁹ Իսկ վրացական ավանդության համաձայն, Ալեքսանդր Մեծը կարգադրում է Վրաստանի իր կուսակալին պաշտել «անտեսանելի աստծուն, տիեզերքը ստեղծողին»:³⁰ Այս «անտեսանելի» արարիչ աստվածը չի կարող առանձնացվել հայկական և պարսկական նշված իրողություններից:

Խեթական մի արձանագրության մեջ (KUB XXVI, 39, IV, 26) թվարկվում են Հայկական լեռնաշխարհում Ուրարտուից դարեր առաջ գոյություն ունեցող պետության՝ Հայասայի աստվածները:³¹ Առաջին տեղում հիշվում է Հայասա «քաղաքի» (= երկրի) Ս.GUR-ը, որը միջագետքյան Ներգալ աստծու գաղափարագիրն է: Ս.GUR-ը, կարծում են, սկզբնապես եղել է Ներգալի թրի անվանումը՝ աքադ. *Ugar* «կործանի՛ր» իմաստով, որն աստվածացվել է որպես Ներգալի «վեգիրը»:³² Արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից նա նույնացվել է Ներգալին և դարձել նրա հիմնական անուններից մեկը: Խեթական և լուվական աղբյուրներում Ս.GUR-ը համարյա միշտ հիշվում է որպես Հայասայի աստված:³³ Խեթա-խաթական ավանդույթում, երկրորդ հազարամյակի կեսից, Ներգալ/Ս.GUR-ը նույնացվել է խաթական *Šulikatte* «Սուլի արքա», կամ *Šulinkatte*՝ «Սուլիի արքա» աստծուն,³⁴ որի «արքա» լինելը նորից շեշտում է Ս.GUR-ի տիրող դիրքը դիցարանում:

տական Թեյշեբա-Խուբա-Տուրանի եղյակը: Սակայն Խուբան սխալ ընթերցում է (տե՛ս KYKH, 400, ճիշտն է՝ Բաբա), ինչն անընդունելի է դարձնում այս վերակազմությունը:

²⁸ Boyce 1986.

²⁹ Salvini 1989, 86.

³⁰ Thomson 1996, 26.

³¹ Քոսյան 2005, գրականությամբ: Հայասայի դիցարանի մասին մանրամասն տե՛ս՝ Պետրոսյան 2015.

³² Lambert 1973, 356.

³³ Van Gessel 1998, 839.

³⁴ Forrer 1931: 6 ff.; Haas. 1994: 367, 599.

Անգեղ աստվածը հայոց հնագույն դիցաբանության մեջ

Ս.GUR-Ներգալը ունեցել է կրակի աստծու գործառույթ: Սիրիայում նա նույնացվել է Ռաշապ աստծուն, որի անունն իմաստավորվում է որպես «բոց, կրակ»,³⁵ իսկ խեթական ավանդույթում՝ Agni-/Akni-ին, որի անունը նույնական է հին հնդկական կրակի աստված Ագնիին և, այսպիսով, «միջագետքյան արիական» փոխառություն է:³⁶ Ապա, խաթական օջախի աստված Zilipuri-ն նույնպես ներկայացվել է Ս.GUR գաղափարագրով:³⁷ Այս փաստերը ցույց են տալիս հայոց Անգեղի և հայաստանի Ս.GUR-ի, ինչպես նաև՝ Խալդիի կերպարային համապատասխանությունը որպես պատերազմի, մահվան աշխարհի և կրակի աստվածներ: Հետաքրքիր է, որ Խալդիի՝ բոցերի մեջ վազող պատկերը համեմատվում է միջագետքյան «վազող աստծու» կերպարի հետ, որպիսին էր Ներգալը,³⁸ այսինքն, այս աստվածները մերձենում են ևս մեկ հատկանիշով: Բայց եթե ուրարտական Խալդիի պաշտամունքի կենտրոնը գտնվել է Հայկական լեռնաշխարհի հարավում, ապա Հայաստան տեղայնացվում է Բարձր Հայքում և մերձակայքում, այնտեղ, որտեղ էին հետագայում կենտրոնացած հայոց նախաքրիստոնեական աստվածների, այդ թվում՝ Արամազդի և Միհրի պաշտամունքները:³⁹

Šulikatte-ն համարվում էր հայրը խաթական ամպրոպի աստված Taru-ի (այս աստվածը նաև կոչվում է «Ներիկ քաղաքի ամպրոպի աստված»): Անգեղ-Սուլիկատե կերպարային նույնությունը հուշում է Տարուի և Տուրքի համադրման հնարավորությունը:⁴⁰ Կա նաև անունների որոշ նմանության գործոնը: Հատկանշական է, որ Տուրք Անգեղայի՝ թշնամիների նավերի վրա քարեր նետելու առասպելը տեղայնացվում է ոչ թե Ծովքում, ինչպես կարելի էր սպասել Խորենացու և Սեբեոսի տվյալներից, այլ Պոնտոսում, այսինքն՝ Հայաստանի մերձակայքում: Բայց այն, ինչ գիտենք Ներիկի ամպրոպի աստծու բավական հայտնի կերպարի մասին, այնքան էլ չի հիշեցնում Տուրքի առասպելը (միայն մի բավական վնասված տեքստից⁴¹ ինչ-որ ենթադրություններ

³⁵ RLA 9, 215, 218; Leick 1991, 143; MHM 2, 373.

³⁶ Տե՛ս, օրինակ, Иванов 1962, 272; van Gessel 1998, 8:

³⁷ Torri 1999, 11–12, 16 (հղ. ըստ Archi 2011, 3). Այս աստծու հիշատակությունները տե՛ս van Gessel 1997, 581–583:

³⁸ Seidl 2004, 200.

³⁹ Հնարավոր է, որ Խալդին եղել է մեծ աստվածը Հայաստանի շրջանի հին բնակիչների, որոնք տեղափոխվել են հարավ և իրենց հետ տարել իրենց աստծու պաշտամունքը, տե՛ս Պետրոսյան 2006գ, 62, 66–69:

⁴⁰ Այդ մասին տե՛ս Հարությունյան 2000, 92–103:

⁴¹ Hoffner 1991, 23.

կարելի է անել):⁴² Ըստ Խորենացու (Բ.ը), Տարոնի հին տերերի՝ Սկունիների էպոնիմ-նահապետն էր Սլաքը, սերված Հայկից, կամ Հայկից էլ առաջ Հայաստանում ապրողներից: Սլաք-Տարան՝ նահապետ-տեղանուն կապը համադրելի է Šulikatte-Taru ծննդաբանությանը և, կարելի է կարծել, որ այստեղ մենք գործ ունենք տեղի հնագույն առասպելաբանական մի հանգույցի հետ, որը հետագայում վերափոխվել է նախարարական տան ծննդաբանության:

Ինչպես ասվեց, Ներգալի սիմվոլը և զենքն էր թուր/դաշույնը: Թուր-U.GUR-Šulinkatte նույնացումը հնարավորություն է տալիս Šuli(n)katte դիցանունը մեկնաբանել որպես «թուր-արքա» կամ «թրի արքա»: Šuli-ն (սուլի, քա-նի որ խեթերեն սեպագիր š-ն արտացոլում է s հնչյունը) համադրելի է հնդեվրոպական *k'u-, *k'ō- «սուր» արմատին, որից, l- և r- մասնիկներով «սուր զենք» նշանակությամբ տերմիններ են ստեղծվել՝ հմմտ. հայ. սուր «թուր, որ- և է սուր գործիք», սլաք <սուլ-աք (-աք ածանցով) «նետ, նիզակ», հնդ. cūla «նիզակ» ևն: Եթե դա այդպես է, ապա այս դիցանվան առաջին մասը հնդեվրոպական է: Սլաքը (Սուլ-աք) կարծես նույնական է Šulikatte-ի առաջին մասին. հնարավոր է նույնիսկ, որ այն ուղղակի ծագում է Šulikatte-ից (*Sulək^hat^he > *Sulak^hay > Sulak^h < Slak^h):⁴³ Վերին աստիճանի հատկանշական է, որ Խալդիի խորհրդանիշ նիզակ/շեղքը կոչվում էր šuri,⁴⁴ որն ակնհայտորեն նույնական է հայ. սուր բառին:

Աստծու՝ թրի տեսքով պատկերվելը կարող է ակնարկել նրա մարդակերպ էության թաքնված «անտեսանելի» բնույթը: Դատելով Սյունիքի Անգեղակոթ դժվար մեկնաբանելի, այսինքն՝ հավանաբար վաղնջական տեղանունից, Անգեղը նույնպես կարող էր նույնացված լինել սուր զենքի շեղքի հետ (հմմտ. դանակի կոթ):

Եզրակացություն

Այսպիսով, վերականգնվում է վաղնջական, բնիկ հայկական դիցաբանության մի դրվագ, Անգեղ աստծու և նրա որդի Տուրք Անգեղայի կերպարներով: Անգեղը ստուգաբանվում է որպես հնդեվրոպական կազմություն՝ *h¹wel-, «Անտես, Անտեսանելի», որը, անվանական մակարդակով, լավագույն

⁴² Այս աստվածը, համարվելով խեթական, և ոչ խաթական (այսինքն՝ ոչ ճշգրիտ կերպով) համադրվել է Տորքի հետ, տե՛ս **Russel** 1993:

⁴³ Այս հարցերի շուրջը տե՛ս **Петросян** 2002, 34–35, 156–157, 164. Šulikatte-Սլաք համադրության հեղինակը Ջ. Ռասելն է, որը գտնում է, որ Սլաքը կարող է ներկայացնել Šulikatte-ի խիստ սղված ձևը, տե՛ս **Russell** 1993, 75:

⁴⁴ Տե՛ս հատկապես **Çilingiroğlu, Salvini** 1999, 56, 59:

Անգեղ աստվածը հայոց հնագույն դիցաբանության մեջ

գուգահեռն է հին հունական մահվան աստված Հադեսի (< *h₂-wid- «Ան-տես», «Անտեսանելի»): Տարածաշրջանային համատեքստում նրա կերպարը համադրելի է որոշ հնագույն աստվածների՝ ուրարտական Խալդիին, հայաստանական Ս.ԳՐ-ին, ապա և՛ իրանական Արամազդին և նախաքրիստոնեական Վրաստանի «արարիչ աստծուն»: Հադեսը գերագույն աստված Զևսի մի ենթակերպարն էր «Ստորերկրայքի Զևսը», Խալդին, Ս.ԳՐ-ը, Ահուրամազդան և վրացական «արարիչ աստվածը»՝ գերագույն աստվածներ, և հայոց Անգեղը ևս, ամենայն հավանականությամբ, պետք է լիներ գերագույն աստծու մի ենթակերպարը, նրա մի ասպեկտի անձնավորումը: Իրանական ազդեցության դարաշրջանում Անգեղը նույնացվել է Միհրին: Անգեղը, Միհրը և նրանց կերպարային ձևփոխությունները հանդես են գալիս հայոց վիպական բանահյուսության մեջ:

Հապավումներ

ՀԱԲ Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան. հ. Ա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1971, 700 էջ:

ՀԱՆԲ Աճառյան Հ. Հայոց անձնանունների բառարան. հ. Ա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1942, 655 էջ:

ՊԲՀ Պատմաբանասիրական հանդես, Երևան:

ИФЖ Историко-филологический журнал, Ереван.

ԿՄԿՆ Արտյոնյան Н. В. Корпус урартских клинообразных надписей. Ереван, «Гитутюн», 2001, 542 с.

МММ Мифы народов мира, М., «Советская энциклопедия», т. 1, 1980, 672 с., т. 2, 1982, 719 с.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1965, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ: (**Abeghyan M.** 1965, *Erker, h. A, Erevan, HSSH GA hrat.*, 572 ej). **Abeghyan M.** 1965, *Works, v. 1, Erevan, Press of AS ASSR, 572 pages (in Armenian)*.

Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 672 էջ: (**Abeghyan M.** 1985, *Erker, h. y, Erevan, HSSH GA hrat.*, 672 ej). **Abeghyan M.** 1965, *Works, v. 8, Erevan, Press of AS ASSR, 672 pages (in Armenian)*.

Ադոնց Ն.Գ. 2006. Երկեր. հ. Ա. Երևան, ԵՊՀ հրատ., 652 էջ: (**Adonc N.G.** 2006, *Erker, h. A, Erevan, EPH hrat.*, 652 ej), **Adonts M.G.** 2006, *Works, v. 1, Erevan, Press of YSU, 652 pages (in Armenian)*.

Բադալյան Մ.Ս. 2014, Կրակի պաշտամունքն ու պատկերագրությունը Վանի թագավորությունում, «Հին Արևելք», № 1, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., էջ 10–25: (**Badalyan M.S.** 2014, *Kraki paštamunkn u patkeragrutyunŷ Vani tagavorutyunum, Hin Arevelk, No. 1, Erevan, HH*

Պետրոսյան Ա.

GA hrat., ej 10–25). **Badalyan M.S.** 2014, *The Worship of Fire and Its Iconography in the Kingdom of Van, Ancient Near East*, No. 1, Press of RA AS, pages 10–25 (in Armenian).

Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ս.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 991 էջ: (**Hakobyan T.X., Melik-Baxšyan S.T., Barseghyan H.X.** 1986, *Hayastani ev harakić šrjanneri teğanunneri bařaran*, h. 1, Erevan, EPH hrat., 991 ej). **Hakobyan T.Kh., Melik-Bakhshyan S.T., Barseghyan H.Kh.** 1986, *Dictionary of Toponyms of Armenia and Adjacent Regions*, v. 1, Erevan, Press of YSU, 991 pages (in Armenian).

Հարությունյան Ս.Բ. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Վ. Սեթյան տպ., 528 էջ: (**Harutyunyan S.B.** 2000, *Haj ařspelabanutyun*, Beirut, V. Setyan tp., 528 ej). **Harutyunyan S.B.** 2000, *Armenian Mythology*, Beirut, V. Setyan Press, 528 pages (in Armenian).

Հմայակյան Ս.Գ. 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 158+31 էջ: (**Hmayakyan S.G.** 1990, *Vani tagavorutyan petakan krony*, Erevan, HH GAA hrat., 158+31 ej). **Hmayakyan S.G.** 1990, *The State Religion of the Van Kingdom*, Yerevan, Press of RA AS, 158+31 pages (in Armenian).

Պետրոսյան Ա.Ե. 2006ա, Ն.Ադոնց. Երկեր, հ. Ա. Գրախոսություն, Պատմաբանասիրական հանդես, № 3, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., էջ 280–285: (**Petrosyan A.E.** 2006a, *N. Adonć. Erker*, h. A, *Graxosutyun, Patmabanasirakan handes*, № 3, Erevan, HH GA hrat., ej 280–285). **Petrosyan A.E.** 2006a, *N. Adonts. Works*, v. 1. Review, *Historical-Philological Journal*, No. 3, Press of RA AS, pages 280–285 (in Armenian).

Պետրոսյան Ա.Ե. 2006բ, Արամազդ. պաշտամունք, կերպար, նախատիպեր, Երևան, «Վան Արյան», 116 էջ: (**Petrosyan A.E.** 2006b, *Aramazd. Pařtamunk, kerpar, naxatiper*, Erevan, “Van Aryan”, 116 ej). **Petrosyan A.E.** 2006b, *Aramazd: Worship, Icon, Archetypes*, Erevan, “Van Aryan”, 116 pages (in Armenian).

Պետրոսյան Ա.Ե. 2006գ, Հայոց ազգաձագման հարցեր, Երևան, «Նորավանք», 146 էջ: **Petrosyan A.E.** 2006g, *Hayoć azgacagman harćer*, Erevan, “Noravank”, 146 ej). **Petrosyan A.E.** 2006g, *Questions of Armenian Ethnogenesis*, Erevan, “Noravank”, 146 pages (in Armenian).

Պետրոսյան Ա.Ե. 2011, Հայերենի եւ Փոքր Ասիայի հնագոյն լեզուների առնչություններ, Էջմիածին, Հրատարակություն Ամենայն Հայոց կաթողիկոսության, էջ 393–404: (**Petrosyan A.E.** 2011, *Hayereni ev Pokr Asiayi hnagoyñ lezunneri ařnćutyunner*, Ećmiacin, *Hratarakutyun Amenayñ Hayoć Katogikosutyun*, ej 393–404). **Petrosyan A.E.** 2011, *Relations Between Ancient Armenian and Asia Minor Languages*, Echmiadzin, *Publication of the Mother See of Holy Etchmiadzin*, pages 393–404 (in Armenian).

Պետրոսյան Ա.Ե. 2015, Հայասայի դիցարանի էթնիկական հիմքերը, Էջմիածին, № 11, Հրատարակություն Ամենայն Հայոց կաթողիկոսության, էջ 78–98: (**Petrosyan A.E.** 2015, *Hayasayi dićarani ethikakan himkery*, Ećmiacin, № 11, *Hratarakutyun Amenayñ Hayoć Katogikosutyun*, ej 78–98). **Petrosyan A.E.** 2015, *Ethnic Foundations of the Hayasa*

Անգեղ աստվածը հայոց հնագույն դիցաբանության մեջ

Pantheon, Echmiadzin, No. 11, Publication of the Mother See of Holy Etchmiadzin, pages 78–98 (in Armenian).

Պետրոսյան Ա.Ե. 2019, Բագրատունիների տոհմի հայկյան ծագման ավանդությունը, Լևոն Խաչիկյան. Հարյուրամյակ (խմբ.՝ Գ. Տեր-Վարդանյան), Երևան, Մատենադարանի հրատ., էջ 129–144: (**Petrosyan A.E.** 2019, *Bagratunineri tohmi haykyan cagman avandutyuny*, Levon Xachikyan. *Haryuramyak* (xmb. G. Ter-Vardanyan), Erevan, Matenadaran Press, pages 129–144). **Petrosyan A.E.** 2019, *The Haykian Origins of the Bagratuni Dynasty*, in Levon Khachikyan, *Centenary* (ed. G. Ter-Vardanyan), Erevan, Matenadaran Press, pages 129–144 (in Armenian).

Ջահուկյան Գ.Բ. 1986, Հայկական շերտը ուրարտական դիցաբանում, Պատմաբանասիրական հանդես, № 1, Երևան, էջ 42–70: (**Jahukyan G.B.** 1986, *Haykakan šertý urartakan dičaranum*, *Patmabanasirakan handes*, № 1, Erevan, eǵ 42–70). **Jahukyan G.B.** 1986, *The Armenian Layer in the Urartian Pantheon*, *Historical-Philological Journal*, No. 1, Erevan, pages 42–70 (in Armenian).

Բոսյան Ա. 2005, Հայաստանի աստվածները (KUB XXVI 39), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, № XXIV, Երևան, Բեյրութ, Հայկազեան համալսարան, էջ 444–457: (**Kosyan A.** 2005, *Hayasayi astvacnerý* (KUB XXVI 39), *Merjavor ev Mijin Arevelki erkrner ev Žoǵovurdner*, № XXIV, Erevan, Beirut, Haykazean hamalsaran, eǵ 444–457). **Kosyan A.** 2005, *The Deities of Hayasa* (KUB XXVI 39), *Countries and Peoples of the Near and Middle East*, No. XXIV, Erevan, Beirut, Haigazian University, pages 444–457 (in Armenian).

Абаев В.И. 1972, Как апостол Петр стал Нептуном.- Этимология 1970, М., «Наука», с. 322–332. **Abaev V.I.** 1972, *How the Apostle Peter Became Neptune*, – *Etymology* 1970, Moscow, Nauka, pp. 322–332 (in Russian).

Афанасьева В.К., Дьяконов И.М. 1981, Я открою тебе сокровенное слово, М., Художественная литература, 352 с. **Afanasyeva V.K., Dyakonov I.M.** 1981, *I Will Reveal to You the Secret Word*, Moscow, Khudozhestvennaya Literatura, 352 pages (in Russian).

Джаукян Г.Б. 1988, О соотношении хайасского и армянского языков. – ИФЖ, № 1, сс. 60–79. **Jaukian G.B.** 1988, *On the Relationship Between the Hayasa and Armenian Languages*, – *IFZh*, No. 1, pp. 60–79 (in Russian).

Дьяконов И.М. 1983, К вопросу о символе Халди. – «Древний Восток», Ереван, № 4, сс. 190–194. **Dyakonov I.M.** 1983, *On the Question of the Symbol of Khaldi*, – *Ancient East*, Yerevan, No. 4, pp. 190–194 (in Russian).

Дьяконов И.М. 1990, Архаические мифы Востока и Запада, М., «Наука», 248 с. **Dyakonov I.M.** 1990, *Archaic Myths of the East and West*, Moscow, Nauka, 248 pages (in Russian).

Иванов В.В. 1962, Культ огня у хеттов. – «Древний мир», М., изд-во вост. лит-ры, сс. 266–272. **Ivanov V.V.** 1962, *The Cult of Fire among the Hittites*, – *Ancient World*, Moscow, Publishing House of Oriental Literature, pp. 266–272 (in Russian).

Март Н.Я. 1902, Боги языческой Грузии по древнегрузинским источникам. – «Записки восточного отделения императорского археологического общества», Т. XIV, вып. II–III. СПб. *Marr N.Ya. 1902, The Gods of Pagan Georgia According to Ancient Georgian Sources, – Proceedings of the Oriental Section of the Imperial Archaeological Society, Vol. XIV, Issues II–III, St. Petersburg (in Russian).*

Николаев С.Л., Страхов А.Б. 1987, К названию бога громовержца в индоевропейских языках. – «Балто-славянские исследования», М., 1985, сс. 149–163. **Nikolaev S.L., Strakhov A.B.** 1987, *On the Name of the Thunder God in Indo-European Languages, – Balto-Slavic Studies, Moscow, 1985, pp. 149–163 (in Russian).*

Петросян А.Е. 1987, Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии. – «Вестник общественных наук АН Арм. ССР», № 1, Ереван, сс. 56–70: **Petrosyan A.E.** 1987, *Reflection of the Indo-European Root wel- in Armenian Mythology, – Bulletin of Social Sciences of the Armenian SSR Academy of Sciences, No. 1, Yerevan, pp. 56–70 (in Russian).*

Петросян А.Е. 2004, Армянский Мхер, западный Митра и урартский Халди. – Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը. Երևան, էջ 42–60: (գիրքը չունի ուսերեն նշված վերնագիր և հրատարակիչ). **Petrosyan A.E.** 2004, *The Armenian Mher, Western Mithra, and Urartian Khaldi, – The Armenian “Sasna Tsrer” Epic and the World Epic Heritage, Yerevan, pages 42–60 (in Armenian; original publication has no Russian title or publisher).*

Пропп В.Я. 1946, Исторические корни волшебной сказки, Л., изд-во ЛГУ, 510 с. **Propp V.Ya.** 1946, *The Historical Roots of the Magic Tale, Leningrad, Leningrad State University Press, 510 pages (in Russian).*

Рак И.В. 1998, Зороастрийская мифология: мифы раннего и средневекового Ирана, СПб., «Летний сад», 560 с. **Rak I.V.** 1998, *Zoroastrian Mythology: Myths of Early and Medieval Iran, St. Petersburg, “Letniy Sad”, 560 pages (in Russian).*

Adontz, N.G. 1927. Tarkou chez les anciens arméniens. – «Revue des études arméniennes» № 1, pp. 184–194.

Archi A. 2011, The Anatolian Fate-Goddesses and Their Different Traditions. – «Diversity and Standardization», pp. 1–26. <https://www.academia.edu/7003669/>.

Bayley H.W. et al. 1989, Baga. – *Encyclopaedia Iranica*, Vol. III, pp. 403–406.

Beekes R. 1998, Hades and Elysion. – *Mír curad: Studies in honor of Calvert Watkins* (eds. J. Jasanoff et al.), “Indogermanische Forschungen”, Vol. 106 (Issue 1), pp. 17–28. <https://doi.org/10.1515/if-2001-0120>

Beekes R.S. 2010, *Etymological Dictionary of Greek*, Leiden / Boston, “Brill”, 1808 p.

Belli, O. 1999, *The Anzaf Fortresses and the Gods of Urartu*, Istanbul, Archaeology & Art Publications edition, 132 p.

Boyce M. 1986, Ahura Mazda. – *Encyclopædia Iranica*, Vol. I, New York, pp. 684–687.

Calmeier P. 1974, Zur Genese altiranischer Motive, II. Der leere Wagen. – *Archologische Mitteilungen aus Iran*, № 7, S. 54–59.

Անգղեր աստվածը հայոց հնագույն դիցաբանության մեջ

- Calmeier P.** 1991, Some remarks on Iconography. Urartu: a Metallworking Center in the First Millennium B.C.E. (ed. R. Merhav), Jerusalem, Israel Museum, pp. 312–319.
- Çilingiroğlu A., Salvini M.** 1999, When was the Castle of Ayanis Built and What is the Meaning of the Word Šuri? – “Anatolian Studies”, № 49, pp. 55–60.
- Diakonoff I.M.** 1981, Evidence on the Ethnic Division of the Hurrians. - Studies on the Civilization and Culture of the Hurrians. In Honor of E. R. Lacheman (eds. M.A. Morrison, D. I. Owen), Winona Lake, “Eisenbrauns”, pp. 77–89.
- Forrer E.** 1931, Hajasa-Azzi. – “Caucasica”, № 9, Leipzig, SS. 1–24.
- van Gessel B.H.L.** 1998, Onomasticon of the Hittite pantheon, Leiden/New York/Köln, “Brill”.
- Hoffner H.A.** 1990, Hittite Myths. Atlanta, “Scholars Press”, 120 p.
- Ivanov V. V.** 1999, Old Novgorodian Nevide, Russian nevidal’: Greek ἀΐδηλος. - UCLA Indo-European Studies. Vol. 1, Los Angeles: pp. 283–292.
- Lambert, W.G.** 1973, Studies in Nergal. Review of E. Weiher. Der Babylonische Gott Nergal. – “Bibliotheca Orientalis”, № 30, SS. 355–363.
- Leick, G.** 1991, A Dictionary of Ancient Near Eastern Mythology, London, New York, Taylor & Francis, 240 p.
- Martirosyan H.K.** 2013, The Place of Armenian in the Indo-European Language Family: the Relationship with Greek and Indo-Iranian. - Journal of Language Relationship, № 10, Moscow, pp. 85–137.
- Martirosyan H.K.** 2021, Iranian personal names in Armenian collateral tradition. Iranisches Personennamenbuch V/3, Vienna: Austrian Academy of Sciences Press.
- Petrosyan A.Y.** 2016, Indo-European *wel- in Armenian mythology. – “Journal of Indo-European studies”, Washington DC, pp. 129–146.
- Russell, J.R.** 1993, Ancient Anatolians and Armenians. - The Second International Symposium on Armenian Linguistics. Proceedings (eds. L. Hovsepian et al.), Yerevan, Armenian Academy Press, pp. 74–85.
- Russell J.R.** 1994, On the Armeno-Iranian Roots of Mithraism. - Studies in Mithraism (J. R. Hinnels, ed.). Rome, “L’Erma” di Bretschneider, pp. 183–193.
- Salvini, M.** 1989, Le panthéon de l’Urartu et le fondement de l’état, - “Studi epigrafici e linguistici sul Vicino oriente antico”, № 6, pp. 79–89.
- Schwemer D.** 2008, The Storm-Gods of the Ancient Near East: Summary, Synthesis, Recent Studies (Part II). - Journal of Ancient Near Eastern Religions, № 8, 1–44.
- Seidle U.** 2004, Bronzekunst Urartus, Mainz am Rhein, von Zabern, 218 S.
- Thomson, R.W.** (trans.) 1996, Rewriting Caucasian History: The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles: the Original of the Georgian Chronicles: the Original Georgian Texts and the Armenian Adaptation. Oxford, “Clarendon press”, 461 p.
- Torri G.** 1999, Lelwani: Il culto di una dea ittita, Roma, “La Sapienza”, 144 p.
- Wiggermann, F.A.M.** 1998–2001, Nergal. – “Reallexikon des Assyriologie», Berlin, De Gruyter, SS. 215–226.

ARMEN PETROSYAN

*Doctor of Philology,
Institute of Archaeology and Ethnography of NAS RA.*

alpehist@gmail.com

0000-0002-1982-5593 

THE GOD ANGEĽ IN EARLIEST ARMENIAN MYTHOLOGY

Summary

In the ancient Armenian translation of the Bible, the Mesopotamian god of the afterlife and war Nergal is represented as AngeĽ. The same name is known in two legends from the books of Khorenatsi and Sebeos. It is interpreted as ‘unsightly, not nice, ugly,’ which seems rather inappropriate for a theonym. However, in the Assyrian myth, Nergal is invisible to the vizier of the goddess of the underworld. Hence the opportunity to etymologize AngeĽ not as an-geĽ ‘having no look,’ i.e. ‘invisible’ but to refer to the Indo-European context, where the closest cognate of the Armenian language is Greek. Thus, AngeĽ would correspond well with the Greek name of the underworld and its god Hades: Ἄϊδης, literally, ‘the Unseen’ < *h₂-wid-. Supreme gods could be the lords of the “three worlds” – heaven, earth, and the underworld, and the Greek Hades, known as “Zeus of the underworld,” was thus one of the incarnations of Zeus. In ancient Armenian tradition, these functions would be attributed to AngeĽ. Notably, the supreme gods of some other ancient states of the region were also conceived to be invisible. However, the name and image of the epic hero Turk’ AngeĽeay, i.e. “The gift of (god) AngeĽ,” should most probably be interpreted as the son of the god AngeĽ.

Keywords: *comparative mythology, Indo-European linguistics, Armenian mythology, earliest Armenian pantheon, Mihr, Hades, Odin.*